

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

*Դոկտ. էդ. Բաղդասարեան
(էդ. Գերմանիկ)*

Նախաբան

Իր բազմադարեան պատմութեան ընթացքում գոյատևման, սոցիալական և ազգային ազատագրութեան, իր լաւ ապագայի համար մաքառումների դաժան ուղի է անցել, օրհասական պահեր է ապրել հայ ժողովուրդը: Նա առանձնապէս ծանր փորձութեան ենթարկւեց, մեծագոյն ողբերգութիւն ապրեց առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի դժնդակ տարիներին:

Մեր սոյն համառօտ ակնարկը ամփոփւում է հետևեալ գլուխներում.

- 1- Ովքեր են հայերը
- 2- Ովքեր են թուրքերը
- 3- Հայերի դերը օսմանական թուրքիայում
- 4- Հայկական կոտորածների պատմութիւնից
- 5- Մեծ Եղեռն
- 6- Մեծ Եղեռնի դրդապատճառներն ու պատասխանատուները
- 7- Հայկական վրէժխնդրութեան պատմութիւնից
- 8- Հայոց ցեղասպանութեան ճանաչման ընթացքը
- 9- Վերջաբան

1- Ովքեր են հայերը

Հայերը, որպէս էթնիկական կազմաւորում, առաջացել են հնդեւրոպական ընդհանրական լեզւի տրոհման հետևանքով: Եթէ մինչև վերջերս հնդեւրոպական լեզւաընտանիքի հայրենիքը համարւել է կենտրոնական Եւրոպան, ապա ըստ նորագոյն ուսումնասիրութիւնների՝ այն տեղադրւում է Հայկական լեռնաշխարհում, նրան յարակից Հիւսիսային Սիջազտքում, Փոքր Ասիայի արևելեան և Իրանական բարձրաւանդակի հիւսիս-արևմտեան մասերում: Այդ բնակավայրերում տակաւին նոր քարի (նեոլիթ - մթա 7-5 հազարամեակ) դարաշրջանում կատարւել է հնդեւրոպական լեզուվ խօսող ցեղերի տրոհումն առանձին լեզւաբարբառների, ապա ցեղակից լեզուների: Մարդաբանական ուսումնասիրութիւնների համաձայն, այդ ժամանակաշրջանից Հայկական լեռնաշխարհը բնակեցւած է եղել Արմենոիդ տիպին պատկանող ցեղերով: Այդ բնորոշ տիպի կրողը ներկայումս հայ ժողովուրդն է: Նեոլիթեան դարաշրջանից էմեոլիթին (պղնձաքար) անցման ժամանակաշրջանում (մ.թ.ա. 5-4 հազարամեակը ներառեալ) հնդեւրոպական ցեղերի մի մասը

տեղաշարժվելով Հայկական լեռնաշխարհից ու Փոքր Ասիայից, տարածվել են Եւրոպա, Միջին Ասիա ու Հնդկաստան, միև մասը (այդ թվում՝ խեթական, հայկական և իրանական ցեղերը) մնացել են նախահայրենիքի տարածքում: Այս բոլորը վկայում են հայերի տեղաբնիկութեան մասին:

2-Ուլքեր եւ թուրքերը

Թուրքական ցեղի ծագման պրոցեսի ժամանակագրական ելակետը, որը ի վերջոյ հանգեցրեց թուրք ժողովրդի կազմաւորմանը, վստահօրէն կարելի է համարել 11-րդ դարի վերջը, երբ սկսվել էր թրքական ցեղերի, գերագանցապէս օղուզների և թուրքմենների զանգւածային գաղթը դեպի Փոքր Ասիա: Հետևաբար, թուրքերի ծագումը, թուրք ժողովրդի կազմավորումը տեղի է ունեցել ուշ միջնադարի շրջանում (12-15-րդ դդ.), որը համեմատաբար լաւ լուսաբանւած է բանավոր աղբիւրներում: Ուրեմն՝ թուրք ազգութեան կազմաւորումն աւարտւել է 15-րդ դարում: Նրանք ձևաւորւել են Միջին Ասիայից Փոքր Ասիա գաղթած 11-13-դդ. թուրքական քոչւոր անասնապահական ցեղերի և տեղաբնիկների միախառնումից: Թուրքերի մի մասը (ուզեր, պեչենեգներ) Փոքր Ասիա է թափանցել Բալկաններից, ձուլւել տեղացի մի շարք ժողովուրդների, ընդունել և իրացրել նրանց նիւթական և հոգևոր մշակոյթի տարրերը: 13-րդ դ., խոյս տալով մոնղոլական արշաւանքներից, Միջին Ասիայից և Իրանից Անատոլիա թափանցեցին բազմաթիւ թուրքական (հիմնականում թուրքմեններ) և ուրիշ ցեղեր: 15-րդ դ. թուրքերը գրաւեցին Փոքր Ասիան և միաւորեցին թուրքական ցեղերը, տեղաբնիկների (հայեր, յոյներ, արաբներ) մի մասը ոչնչացւեց, մնացածը ձուլւեց: 15-16-դդ. թուրքերը չունէին միասնական ցեղանուն, դրան փոխարինում էր դաւանական մուսուլման անւանումը:

Դեռևս 19-դ. 30-ական թթ. Թուրքիայում 7 միլիոն թուրքերից բացի բնակւում էին 2 մլն.-ից ավելի հայեր, մոտ 2 մլն. քրդեր, 1-1.5մլն. յոյներ, ինչպէս նաև աջարներ, հրեաներ, ալբանցիներ, բոսնիացիներ, խորւաթներ, որոնք կազմում էին բնակչութեան 45%-ը: Առ այսօր շարունակւում է համընցիների (մեծ մասամբ՝մահմեդականացած հայեր) միաձուլումը: 20-դ. սկզբին ձևաւորւեց թուրքական ազգը: Էթնիկական ողջ ընթացքում նրանց մշակոյթն ու լեզուն ներառել է յունական, հայկական, վրացական, բալկանեան ժողովուրդների լեզվական և մշակութային տարրեր: Անաթոլիայի Թուրք ազգը ձևաւորւելու համար հարկաւոր էր միև ազգութիւնները ոչնչացւէին:

3-Հայերի դերը Օսմանական Թուրքիայում

Օսմանական պետության ստեղծումից յետոյ, հայերը միև ազգերի թւում մտան նրա լծի տակ և ունեցան իրենց իւրայատուկ դերը այդ կայսրութեան զանազան ասպարեզներում: Այժմ հարկ ենք համարում հպանցիկ ակնարկ ունենալ այդ կապակցութեամբ:

Օսմանական պետութեան բարձրաստիճան իշխանութիւնները հայերն էին: Նրանցից կարելի է հիշատակել Ամիր Սեդրոսին, Ամիր Շնորհքին (1720թ. մի քանի հայկական դպրոց հիմնեցին Կ. Պոլսում) , Ամիր Ապրահամ (1824թ. հիմնեց առաջին տպարանը Թուրքիայում), Յովհաննէս Դոզեան և Սկրտիչ Ջազայերլեան (մաքսատները բոլորովին նրանց էին յանձնւած):

1795 թվականից ի վեր զինամթերքի շտեմարանի տնօրինութիւնը սերնդէսերունդ Տատեան ընտանիքին էր պատկանում: Թղթադրամի տպագրումը պատկանում էր Դոզեաններին ու (Հարութիւն) Բեզեճեաններին:

Երբ 1828թ. ռուսական զօրքը մոտեցել էր Կ. Պոլսի դարպասներին և 15 մլն. ռուբլի աւար էր պահանջում՝ Սուլթան Մահմուդը անճարակութեամբ դիմում է Ամիր Բեզեճեանին, որովհետև պետութիւնը ի վիճակի չէր վճարելու, ուստի նա հոգում է այդ գումարը: Նրա մահուան առիթով Սուլթանը խիստ յուզւելով, արքունական կազմով սև հագած մասնակցում է նրա յուղարկավորութեանը:

Յովհաննէս Տատեանը Բարձր Դռան կողմից նշանակւել էր թղթի, մետաքսի և պայթուցիկների գործարանների տնօրէն: (1856թ.) յետոյ նաև կաշվի, կտորի և մետաղի ձուլարանի տնօրէն:

Հնուց կայսրութեան շինարարական և ճարտարապետական աշխատանքները վստահւել էին Սարվարեաններին, յետոյ նաև Բալեաններին:

Այսուհանդերձ թուրքական իշխանութիւնը չէր ցանկանում բոլոր գործերը յանձնել հայերին, ուստի նրանց համար թուրք կառավարիչներ էր նշանակում, յատկապէս բանակում և ներքին գործերի նախարարութիւնում:

Պետութեան գանձապահութեան պաշտօնը միշտ էլ հայերին էր տրւում, օրինակ՝ Յակոբ Քազաղեանը, Միքայէլ Պորթուզալեանը և Յովհաննէս Սաքըրզ փաշան գանձապահութեան նախարարներ էին:

Գրիգոր Էֆենդին փոստի, հեռագրի և շինարարութեան նախարար էր նշանակւել 1864թ.:

Բժշկական և այլ համալսարանները հայերին էին վստահում (օրինակ Նիկողայոս Ռուսինեան, Անդրանիկ Խանդումեան, Ստեփան Ասլանեան, Թրեզեան, Միհրան Գարագաշ, Յակոբ Բոյաճեան):

Հաշվապահութեան հիմնադիրներն են եղել Կարապետ Խդրեանն ու Գոյումճեանը:

Առևտրի հիմնադիրները Ջուղայի հայ վաճառականներն են եղել:

Հարուստ փառաքան Տատեանը երկար ժամանակ արտգործնախարարութեան գործակատարն է եղել:

Արիեստներն ու առևտուրը մեծ մասամբ հայերին էր պատկանում, օրինակ՝ Կ. Պոլսի ոսկերիչների շուկան միանգամայն հայերի ձեռքում էր: Երկրի ներածումները՝ յոյների, իսկ արտահանումները՝ հայերի մենաշնորհն էր:

Գեղարեստի զանազան բնագաւառներում հայկական դեմքերն էին փայլատակում, որոնց յիշատակելու համար մեծ համբերութիւն է պահանջուում:

Այսուհանդերձ թուրքերը իրականում չէին վստահում հայ տարրերին, օրինակ՝ երբ 1826թ. հայերը քսան մաւերով յատուկ հանդիսութեամբ սահմանադրութիւնը շնորհաւորելու համար գնում են Կ. Պոլսի նահանգապետ Ալի փաշայի մօտ, վերջինս իր մերձականերին այսպէս է արտայայտում. «Ես հայերից վախենում եմ, նրանք ծածուկ աշխատանք են տանում և մօտ յարաբերութիւն ունեն ժողովրդական մասսաների հետ և հեռու չեն գտնում այն պահը, երբ նրանք միանալով թուրք տարրերին, Օսմանական պետութեան դէմ ապստամբեն»:

4 - Հայկական կոտորածների պատմութիւնից

Ինչպէս քիչ առաջ անդրադառնալով, հայկական տարրի ոչնչացումը յատկապէս սկսւել է 15դ.-ից, սակայն, երբ հայ ազատագրական պայքարը նոր կազմակերպւած հիմքերի վրայ դրուեց, և հայ ժողովուրդը ազգային զարթօնք ապրեց՝ հայկական կոտորածները կազմակերպւած և ծրագրւած կերպով նոր թափ ստացան յատկապէս 19-դարի երկրորդ կէսից:

Ի նկատի ունենալով սոյն համառօտ ակնարկի բովանդակութեան սուղ սահմանները, ստորև տալիս ենք հայկական կոտորածների նորագոյն շրջանի ժամանակագրութիւնն ու կոտորածների թիւը.

| No. | թւական | վայր | Քանակը (մարդ) |
|-----|--------|-----------------|---------------|
| 1. | 1860 | Լիբանան | 12,000 |
| 2. | 1876 | Բուլգարիա | 14,000 |
| 3. | 1877 | Բայազետ | 1,400 |
| 4. | 1879 | Ալաշկերտ | 1,250 |
| 5. | 1881 | Ալեքսանդրիա | 2,000 |
| 6. | 1892 | Ներքին Թուրք. | 3,500 |
| 7. | 1894 | Սասուն | 12,000 |
| 8. | 1895 | Արևմտահայաստան | 300,000 |
| 9. | 1846 | Կոստանդնուպոլիս | 9,570 |
| 10. | 1903 | Մակեդոնիա | 14,667 |
| 11. | 1904 | Սասուն | 5,640 |
| 12. | 1909 | Կիլիկիա | 30,000 |

| | | | |
|---------------------------|------|--------------------------|-----------|
| 13. | 1915 | Թուրքիա և Արևմտահայաստան | 1,500,000 |
| 14. | 1918 | Կարս, Արդանան | 50,000 |
| 15. | 1918 | Բաքու և շրջակայք | 30,000 |
| 16. | 1919 | Կիլիկիա և շրջակայք | 60,000 |
| 17. | 1921 | Հաճըն | 20,000 |
| 18. | 1922 | Զմիռնիա | 10,000 |
| Ընդամենը (1860թ.- 1922թ.) | | | 2,284,027 |

(Աղբիւրը՝ New York Times, Աշխարհի ահաբեկչությունները և կոտորածները: էջ 396)

5- Մեծ եղեռն

Արևմտահայության Ֆիզիկական բնաջնջման իր հրեշալոր ծրագրերը թուրքական բռնակալությունը մշակել է դեռևս անցյալ դարի վերջերին: Սակայն այդ քաղաքականությունն աւելի լայն չափերով իրագործւեց երիտթուրքերի կառավարման տարիներին:

Դեռ 1914թ. աշնանը և 1915թ. սկզբներին թուրքական իշխանություններն սկսեցին հատուծաբար ոչնչացնել բանակ գորակույզած հայերին, ապա նաև ճանապարհների վրա աշխատեցնելու պատրուակով զօրահաւաքի ենթարկւած 15-20 և 45-60 տարեկան տղամարդկանց: Օգտագործելով պատերազմական իրադրությունը, իթթիհատականները 1915թ. սկզբներին կայացած իրենց կուսակցութեան կենտկոմի գաղտնի նիստում որոշեցին արևմտահայության բնաջնջման և տեղահանութեան կոնկրետ եղանակները:

Թալեաթի նախագահութեամբ գումարւած գաղտնի նիստում, որին մասնակցում էին Էնլերը, Նազըմը, Բեհաեդդին Շաքիրը և ուրիշներ, հանդէս գալով որպէս հիմնական զեկուցող կոմիտէի քարտուղար Նազըմը կոչ էր անում չբաւարարել Ադանայի կոտորածի նման մասնակի ջարդերով. «Պետք է հայ ազգը արմատախիլ լինի, մեր հողի վրա մի անհատ անգամ չմնա, հայ անունը մոռացւի: Հիմա պատերազմի մէջ ենք, սրանից հարմար առիթ չի գտնվի, մեծ պետութիւնների միջամտութիւնը և թերթերի բողոքի ձայնը նկատելի իսկ չի կարող լինի, լինելու պարագային խնդիրը կատարւած մի իրողութիւն կդառնայ և կփակւի, այս անգամայ գործողութիւնը բնաջնջումի մի գործողութիւն պիտի լինի, մի հայ անհատ իսկ չմնալու պայմանով բնաջնջումը անհրաժեշտ է»:

Այսպէս, ապրիլի 15-ին տեղական իշխանութիւններին Թալեաթի, Էնլերի, և Նազըմի ստորագրութեամբ գաղտնի հրաման ուղարկւեց, որտեղ ասւած էր, թէ օգտուելով պատերազմի ընծեռած հնարաւորութիւնից, անհրաժեշտ է վերջնականապէս բնաջնջել հայերին՝ նրանց քշելով դէպի Արաբիայի անապատները:

Դահիճները առաջին հերթին հաշւեյարդար տեսան հայ ականաւոր գործիչների ու մտաւորականների, այդ թուում մեջլիսի հայ պատգամավորների հետ: Միայն Կ. Պոլսում ապրիլի 24-ի լոյս 25-

ի գիշերն ոստիկանութիւնը ձերբակալեց 235 անվանի հայ մտաւորականների: Շուտով ձերբակալածների թիւը հասաւ շուրջ 800-ի, որոնք քշւեցին դէպի Անատոլիայի խորքերը և գազանաբար սպանւեցին աքսորի ճանապարհին: Կ.Պոլսի նահատակած հայ մտաւորականների թւում էին Գ.Զոհրապը, Դանիէլ Վարուժանը, Սիամանթօն, Ռ. Զարդարեանը, Ռ.Սևակը, Յովի. Թլկատինցին, Հրանդը, Երուխանը և շատ շատ ուրիշներ: Հանճարեղ Կոմիտասը պատահաբար փրկւելով մահից և ականատէս լինելով հայ ժողովրդի մեծագոյն այդ ողբերգութեանը՝ կորցրեց բանականութիւնը:

Երիտթուրքերի կառավարութիւնը 1915թ. Յունիսի 15-ին Կ.Պոլսի սուլթան Բայազիտի հրապարակում կախաղան բարձրացրեց հնչակեան կուսակցութեան 20 ղեկավարների (Փարամազ, դոկտ. Պենե, Վանիկ, Ա. Աչքաչաշեան և այլն):

Թալեաթի ստորագրութեամբ մի գաղտնի կարգադրութիւն է յղուծ վիլայէթների իշխանութիւններին, ուր ասուծ էր, որ բնաջնջել անհրաժեշտ է Արևմտեան Հայաստանի և Կիլիկիայի ողջ հայ ազգաբնակչութիւնը. «Կառավարութիւնը իր վրայ է վերցնում ամբողջ պատասխանատուութիւնը և հրամայում է չխնայել անգամ օրօրոցի երեխաներին»:

Տեղական իշխանութիւնները մեծագոյն ճշտութեամբ էին կատարում Թալեաթի բոլոր կարգադրութիւնները: Այսպէս 1915թ. ապրիլ-մայիսին տեղահան արւեցին Կիլիկիայի հայերը, յունիս-յուլիսին՝ Կարինի, Տրապիզոնի, Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Սւազի, օգոստոս-սեպտեմբերին՝ Անկարայի, Ադաբազարի, Բրուսայի, Ջեբել Մուսայի, Ուրֆայի և Այնթապի հայերը:

Հայերի աքսորը դէպի Դեյր-էզ-Ջոր (աղավաղված՝ Տեր Զոր) քաղաքի շրջակայ տոթակէզ անապատը և գանգաւածային ջարդը միևնոյն եղանակով և միաժամանակ իրականացվեց Թուրքիայի ավելի քան 50 վայրերում:

Աքսորից առաջ տղամարդկանց բաժանում էին ընտանիքներից ու ոչնչացնում: Գեղեցիկ կանանց ու աղջիկներին բռնի կերպով առանձնացնում էին՝ մեծահարուստ թուրքերի հարամներն ուղարկելու համար: Ապա սովայար հոծ գանգաւածներին քշում էին Անատոլիայի լեռնաքմբներով, կիզիչ արևի ճառագայթների տակ՝ դէպի միջագետքի անապատները: Հազարաւոր հայեր ճանապարհին մահանում էին սովից, ծարաւից, ուժասպառութիւնից: Նրանք՝ ովքեր այլևս անկարող էին առաջ շարժւել, անմիջապէս սւիմայարում էին:

Այս աքսորեալներից շատ քչերն էին տեղ հասնում. օրինակ՝ Սեբաստիայից և Խարբերդից աքսորւած 18000 հայերից աքսորավայր են հասել 150 կին և երեխայ. Հալէպից Ռես-ուլ Այն և Մերսենի ճանապարհով աքսորված 20000 հայերից կենդանի մնացին 5000 հոգի: Կարինի վիլայէթի 215000 հայ ազգաբնակչութիւնից կենդանի մնացին ընդամենը 2000, իսկ Կարին քաղաքի 18000 հայերից՝ 120 մարդ:

Հայկական կոտորածներն ոչ միայն տեղի էին ունենում հայկական վիլայեթներում այլ նաեւ Թրակիայում և այլ տեղերում բնակվող հայերի նկատմամբ:

Հայերին գլխովին չաքտրեցին միայն երկու քաղաքներից՝ Կ. Պոլսից ու Զմիւռնիայից:

Այսպիսով, 1915-1918 թթ ընթացքում երիտթուրքական կառավարութեան կողմից ձեռնարկւած հայաջինջ գործողութիւնների հետևանքով մօտ երկու միլիոն հայեր քարտուեցին, որոնցից մէկ ու կէս միլիոնից աւելին սպանւեց կամ զոհ գնաց սովին ու համաճարակին Միջագետքի անապատներում: Բռնի թուրքացման ենթարկվեցին շուրջ 200000 հայեր, գերազանցապէս կանայք ու երեխաներ:

Երտթուրքերը գազանային եղանակով «լուծեցին» հայկական հարցը: Մեծ եղեռնից յետոյ արիւնարբու Թալեաթ փաշան պաշտօնապէս յայտարարեց՝ «չկա այլևս հայկական հարց, քանի որ չկան նաև հայեր»:

1916թ. Լոնդոնում հայկական հարցի կապակցութեամբ տեղի ունեցած բանակցութիւններին հայ ազգային պատւիրակութեան նախագահ Պողոս Նուբար փաշայի առաջարկը՝ կոտորածներից ազատւած հայ տարագիրներից Արևելեան լեզեոն ստեղծելու մասին, հավանութիւն գտավ Ֆրանսիայի (ժորժ Պիկո) և Անգլիայի (Մայքըլ Սայքս) կողմից:

1916թ. նոյեմբերի 28-ին Ֆրանսիայի կառավարութիւնը որոշեց հայ տարագիրներից կազմաւորել այդ լեզեոնը: Այդ լեզեոնի ընդհանուր թիվը 1918թ. Մայիսին կազմում էր 5662 զինուոր, որից 400-ն էին սիրիացիներ, մնացածը հայեր էին: Նրանք առաջին անգամ պատերազմական գործողութիւններին մասնակցեցին միայն 1918թ. սեպտեմբերի 19-ին Պաղեստինի ճակատում:

Հնչակեանների, ռամկավարների և դաշնակցականների դեկավարները յուսադուելով ինպերիալիստական Ֆրանսիայի պետական գործիչների խաբեբայ ճառերից, 1920թ. Օգոստոսի 3-ին Ադանայի մօտակայքում, իւրաքանչիւրը առանձին-առանձին «Միջագետքի հանրապետութիւն» հռչակեցին, իսկ Ադանայում Օգոստոսի 4-ին Սիիրան Տամատեանի նախագահած Ազգային գերագոյն խորհուրդը «Ֆրանսիական հովանաւորութեան տակ ինքնավար Հայաստան հռչակեց»: Այդ հանրապետութիւններից երկուսը առաջին իսկ օրը, իսկ երրորդը՝ երրորդ օրը վերացւեցին Ֆրանսիական գործառնաւորի կողմից:

Սկսւած անգլո-Ֆրանսիական հակասութիւնների պայմաններում Ֆրանսիան հակվեց դէպի Թուրքիան: 1921թ. Հոկտեմբերի 20-ին Անկարայում Ֆրանսիայի և Քեմալական Թուրքիայի միջև կնքւեց պայմանագիր, որով Ֆրանսիան իր գօրքերը հեռացրեց Կիլիկիայից: Այսպիսով ինչ որ իթթիահատականներին չյաջողւեց անել Մեծ եղեռնի օրերին, հինգ տարուց հետո յաջողւեց կատարել քեմալականներին: Այդ երկրորդ ցեղասպանութիւնը, որին զոհ գնացին 30000-ից ավելի

կիլիկիահայեր, այս անգամ կատարեց մեծ պետությունների ուղղակի թողուութեամբ: Կիլիկիան ևս դատարկեց հայութիւնից:

6- Մեծ եղեռնի դրդապատճառներն ու պատասխանատուները

Մեծ եղեռնի առաջացման գլխաւոր պատճառները կարելի է ամփոփել հետևեալ կերպով.

1-Թուրքական ազգի ձևավորման պրոցեսի անբաժանելի մասն էր կազմում հայերի ուժացումն ու ոչնչացումը:

2-Եւրոպայի իմպերիալիստական պետութիւնների համար առիթ էր ծառայում «հայկական հարցն» ու հայերի գոյությունը թուրքական իշխանութեան տերիտորիայում, որով նրանք կարողանում էին միջամտել թուրք պետութեան գործերին: Կոտորածների ծրագրի շնորհիւ միանգամայն վերանում էր այդ հարցը:

3-Հայկական գլխաւոր կոտորածները ծրագրեցին մասոնական կազմակերպութիւնների միջոցով, որպէսզի հայերի ոչնչացումով հրեաների ամենամեծ տնտեսական մրցակիցը կանգ առնի գոյութիւն ունենալուց: Յայտնի է, որ թէ օսմանական ժամանակաշրջանի, և թէ իթթիհատական ու քենալական ղեկավարները կան ծագումով մասոնական հրեաներ էին, և կան թուրք մասոնականներ (օրինակ՝ Թալեաթ փաշան, Քենալ Աթաթուրքը, փրինս Ահմադ քենալ էդդին Էֆենդի և Նուրեդադին Էֆենդի՝ Սուլթան Աբդուլ Մաջիդի զաւակները, Սուլթաֆա Ռաշիդ փաշա, օսմանական վարչապետ և այլն):

4-Հայերը և հայ ազատագրական պայքարը մեծ խոչնդոտ էին համարում պանթուրքական զաթողական ծրագրերի իրականացման դէմ, որի իսկական հրահրողներն էին Գերմանիան, Անգլիան և Ֆրանսիան (հիարկէ տարբեր ժամանակաշրջաններում). Հայկական ազատագրական պայքարն ու արևմտահայերը առհասակ ռուսական հակում ունէին, որը չէր համընկնում արևմտեան երկրների շահերին: Այս կարելի ազդակը ամբողջութեամբ առնչում է մեծ Թուրքիա ստեղծման եւրոպական-մասոնական երկարատեւ ծրագրի հետ, այդ մեծ թութքական կանաչ գօտին պարունակում էր Անաթոլիան, Ազերիբնակ բոլոր տարածաշրջանները եւ միջին ասիական թութքաբնակ շրջանները:

5-Օսմանական նախկին երկրների անկախացումը (Բուլգարիա, Յունաստան և բալկաններ) այդ պետութեանը պարտադրեց ուշադրութիւն դարձնել արևելեան սահմաններին և ճնշել հայկական շարժումները:

6-Հայկական անհեռատես և արկածախնդրական զինեալ գործողութիւնները, որոնք առիթ էին տալիս թութքական իշխանութիւններին անողոր ջարդի ենթարկել անպաշտպան եւ անզէն խաղաղ հայ զանգւածներին:

Հայկական կոտորածների իսկական պատասխանատուները հետևեալներն են.

1-Գերմանական, Աւստրո-հունգարական, Անգլիական, Ֆրանսիական և Ցարական պետությունները:

2-Համաշխարհային գաղտնի կազմակերպությունները, որոնց ճիրանների մէջ են գտնուում ինպերիալիստական պետությունները:

3-Օսմանական, իթթիհատական և քենալական պետությունները:

1919թ. մարտի 8-ին սուլթան Մեհմեդ 6-րդ Վահիդեդդինի (1918-1922) հատուկ հրամանով, երիտթուրքական կուսակցական պարագլուխներն ու նախարարները յանձնուում են Կ.Պոլսի ռազմական արտակարգ ատեանի քննութեանը: Այս դատաքննութիւնների ընթացքում հեռակայ կարգով մեղադրուում են 10 իսկ դատավարութեանը ներկա 20 կուսակցական և պետական բարձրաստիճան գործիչներ:

Հիեռակայ կարգով դատի տրւած մեղադրեալներն էին.

1-Թալեաթ փաշա - ներքին գործ. նախարար, մեծ վեզիր (1917-1918):

2-Էնւեր փաշա - ռազմական նախարար

3-Չեմալ փաշա- ծովային

4-Բեհաւեդդին Շաքիր Բեյ- երիտ. թուրք. կուսակցութեան կկ անդամ «Թեշքիլաթ-ը Սախսուսէ»-ի նախագահ

5-Դոկտ. Նազըմ Բեյ- յիշւած կուսակցութեան կկ անդամ, հանրակրթական նախարար:

6-Ջաւիդ բեյ- Ֆինանսների նախարար:

7-Սուլէյման Էլբիստանի բեյ- հողագործութեան առևտրի նախարար (1915-1917):

8-Մուստաֆա Շերեֆ բեյ- հողագործութեան և առևտրի նախարար:

9-Օսկան Էֆենդի- փոստի և հեռագրատան նախարար (1914-1917):

10-Դոկտ. Ռուզուհի Էֆենդի- կուսակց. կկ անդամ:

11-Ազիզ Էֆենդի- հասարակական անվտանգութեան նախարար:

7-Հայկական վրէժխնդրութեան պատմութիւնից

Հայոց մեծ եղեռնի թուրք կազմակերպիչները գերծ չմնացին հայերի վրէժխնդրութիւնից և հայկական գնդակների թիրախը դարձան ըստ հետևեալի.

1-Էնւեր փաշան 1922թ. Թաշքենդում սպանւեց հայազգի Աղաբեգովի ձեռքով:

2-Չեմալ փաշան 1922թ. Թիֆլիսում Պետրոս Տ.Պողոսյանի և Արտաշէս Գևորգեանի միջոցով:

3-Խան Խոյսկին՝ Ադրբեջանի վարչապետը 1920թ. Արամ Երկանեանի ձեռքով:

4-Աբբաս Բեգովը 1920թ. Արամ Երկանեանի ձեռքով:

5-Թալեաթ փաշան 1921թ. մարտի 21-ին Բերլինում Սողոմոն Թեհլիրեանի ձեռքով:

6-Սաիդ Հալիմ փաշան 1921 դեկտ. 6-ին Հռոմում Արշալիր Շիրակեանի ձեռքով:

7-Բեհա էդդին Շաքիր բեյը 1922թ. ապրիլի 17-ին Բերլինում Արամ Երկանեանի ձեռքով:

8-Ազիմ փաշան 1922թ. ապրիլի 17-ին Բերլինում Արշալիր Շիրակեանի ձեռքով:

9-Բեհբուտխան Ջիվանշիրը՝ Ադրբեջանի ներք. գործ. նախարարը, 1931թ. հուլիսի 19-ին Կ.Պոլսում Միսակ Թորլակեանի ձեռքով:

8-Հայոց ցեղասպանության ճանաչման ընթացքը

8-1- Անմիջական արձագանքներ

Հայոց ցեղասպանութիւնը յիշատակելու ամրագրել է բազմաթիւ փաստաթղթերում: Այսպէս, 1915 թ. մայիսի 24-ի Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի եւ Ռուսաստանի համատեղ հռչակարգում արձանագրուում է, որ ապրիլի կեսերին մի շարք բնակավայրերում կոտորածներ են տեղի ունեցել, իսկ Օսմանեան կայսրութեան կառավարութիւնը մի շարք քայլեր է ձեռնարկել կայսրութեան հայ բնակչութեան դէմ: Հաշի առնելով մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ Թուրքիայի հանցագործութիւնները, եռեակ միութեան կառավարութիւնները յայտարարում են Թուրքիայի ղեկավարութեանը, բոլոր հանցագործութիւնների համար պատասխանատու են Օսմանական կայսրութեան կառավարութեան բոլոր անդամները եւ բոլոր նրանց ներկայացուցիչները, որոնք անմիջականօրէն մասնակցել են այդ ջարդերին:

1915 թ. փետրւարի 9-ին ԱՄՆ Սենատը բանաձեւ է ընդունել, որում, հաշի առնելով, որ պատերազմի մէջ ներգրաււած երկրներում մի քանի հարիւր հազար հայեր պարէնի, կացարանի եւ հագուստի կարիք ունեն, կոչ է անում ԱՄՆ նախագահին մէկ օր յայտարարել, երբ ԱՄՆ քաղաքացիները կարող են իրենց համակրանքն արտայայտել եւ մարտնչող երկրներում հայերին օգնելու համար միջոցներ տրամադրել: Բանաձեւի մէջ նշուում է, որ հայերի մեծ մասը մարտական գործողութիւնների պատճառով հարկադրւած էր թողնել տները, հնարաւորութիւն չունի պարէն եւ տարրական կարիքների բաւարարման համար այլ անհրաժեշտ ապրանքներ ձեռք բերել, նշուում է սովի, հիւանդութիւնների մասին:

1920 թ. մայիսի 11-ին ԱՄՆ-ի Սենատը, ճանաչելով Հայաստանի Հանրապետության անկախությունը, նշում է, որ «հստակ վեր է անկախությունը հայ ժողովրդի դեմ իրագործված զանգվածային կոտորածի եւ այլ հանցագործությունների վերաբերեալ»:

8-2- Պաշտոնական ճանաչումներ

1. Ուրուգվայի Արենելեան Հանրապետության Սենատի եւ Ներկայացուցիչների միացեալ գլխաւոր ասամբլեայում 1965 թ. ապրիլի 20-ին ընդունել է «Հայ նահատակների յիշատակի օրւայ մասին» օրէնք:

2. 1982 թ. ապրիլի 29-ին Կիպրոսի Ներկայացուցիչների պալատը 1915 թ. հայերի ցեղասպանութեան տարելիցի կապակցութեամբ դատապարտում է այն ժամանակայ թուրքական ռեժիմի կազմակերպած ցեղասպանութիւնը՝ որակելով որպէս հայ ժողովրդի դեմ հանցագործութիւն, եւ պաշտ-պանում է հայ ժողովրդի խախտուած իրաւունքների լրիւ վերականգնումը:

3. 1987 թ. յունիսի 18-ին ընդունած իր բանաձեւում Եւրախորհրդարանը ճանաչել է 1915-17 թթ. Օսմանեան կայսրութիւնում հայերի ցեղասպանութեան, փաստը եւ Եւրոպայի խորհրդից պահանջել ճնշում գործադրել Թուրքիայի կառավարութեան վրայ՝ 1915-17 թթ. հայերի ցեղասպանութիւնը ճանաչելու նպատակով: Խորհրդարանն ընդունում է, որ ներկայիս Թուրքիան չի կարող պատասխանատութիւն կրել Օսմանեան կայսրութիւնում հայերի դեմ հանցա-գործութիւնների համար: Ուստի ընդգծում է, որ ցեղասպանութեան փաստի ճանաչման հետեւանքով չեն կարող բխել ներկայիս Թուրքիային ուղղւած ոչ քաղաքական, ոչ իրաւական եւ ոչ էլ միւսական հաւակնութիւններ:

4. Ռուսաստանի Ղաշնութեան Պետդուման 1995 թ. ապրիլի 14-ին ընդունել է 1915-22 թթ. հայ ժողովրդի ցեղասպանութիւնը դատապարտող յայտարարութիւն, որում դատապարտելով 1915-22 թթ. հայերի բնաջնջման կազմակերպիչներին, իր կարեկցանքն է յայտնել հայ ժողովրդին եւ ապրիլի 24-ը համարել եղեռնի զոհերի յիշատակի օր:

5. 1996 թ. ապրիլի 25-ին Յունաստանի Հանրապետութեան խորհրդարանը որոշում է կայացրել ապրիլի 24-ը համարել «Թուրքիայի կողմից 1915 թ. Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակի օր»,

6. 1997 թ. ապրիլի 3-ին Լիբանանի Հանրապետութեան Ազգային ժողովն ընդունել է բանաձեւ, որով ապրիլի 24-ը հռչակել է «Հայ ժողովրդի դեմ գործադրւած ջարդերի արհաւիրքի յիշատակի օր»: Բանաձեւը լիբանանցի ժողովրդին՝ ապրիլի 24-ը հայ ժողովրդի հետ միասնականութեան օր յայտարարելու կոչ է ուղղում: Իսկ 2000 թ. մայիսի 11-ին Լիբանանի խորհրդարանը միաձայն ընդունել է հետեւեալ բանաձեւը «Լիբանանի խորհրդարանը 1915 թ. իրականացւած հայերի ցեղասպանութեան 85- ամեակի առիթով ճանաչում եւ դատապարտում է օսմանեան իշխանութիւնների կողմից մեկուկէս միլիոն հայերի

նկատմամբ իրագործած ցեղասպանությունը: Խորհրդարանն իր լիակատար աջակցությունն է յայտնում հայ քաղաքացիների պահանջատի-րությանը եւ գտնում է, որ հայերի ցեղասպանության միջազգային ճանաչումը կենսական պայման է՝ ապագայում նմանօրինակ ոճիրների կանխարգելման համար»:

7. Աւստրալիայի Նոր Հարաւային Ուելիս նահանգի խորհրդարանը 1997 թ. ապրիլի 17-ին ընդունել է բանաձեւ, որում ընդառաջելով տեղի հայ համայնքի ցանկություններին, դատապարտել է Օսմանեան կայսրութեան տարածքում կատարած ոտնձգու-թիւնները՝ որակելով դրանք որպէս 20-րդ դարի առաջին ցեղասպանութիւն, ապրիլի 24-ը յայտարարել է հայ զոհերի յիշատակի օր եւ հայերի ցեղասպանութիւնը պաշտօնապէս դատապարտելու կոչ է արել Աւստրալիայի կառավարութեանը:

8. 1998 թ. մարտին Բելգիայի Սենատը ընդունել է բանաձեւ 1915 թ. Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանութեան իրականացումը ճանաչելու մասին, խնդրելով Թուրքիայի կառավարութեանը նոյնպէս ճանաչել այն:

9. 1993 թ. մայիսի 5-ին Արգենտինայի Սենատը բանաձեւ է ընդունել, որում իր համերաշխութիւնն է յայտնում հայ համայնքին, որը 20-րդ դարի առաջին ցեղասպանութեան զոհ է դարձել, նորից նշում է մարդկութեան դէմ հանցագործութիւնների տարելիցը, որի գագաթնակէտը դարձաւ 1915-17 թթ. Թուրքիայի կառավարութեան կողմից կազմակերպւած 1.5 մլն հայերի սպանութիւնը: 1998 թ. ապրիլի 16-ին Բուենոս- Այրեսի օրենսդիր մարմինը հռչակագիր է ընդունել, որում իր համերաշխութիւնն է յայտնել արգենտինահայ համայնքին՝ Օսմանեան կայսրութեան կողմից իրականացւած 1,5 մլն-ից աւելի հայերի ցեղասպանութեան 1998 թ. ապրիլի 24-ին նշուող 83-ամեայ տարելիցի առթիւ: 1998 թ. ապրիլի 22-ին Արգենտինայի Սենատն ընդունել է մի յայտարարութիւն, որով դատապարտում է բոլոր տեսակի ցեղասպանութիւնները՝ որպէս մարդկութեան դէմ գործած ոճիրներ: Նոյն յայտարարութեան մէջ Սենատն իր համերաշխութիւնն է արտայայտում նախապաշարունների եւ անհանդուրժողականութեան զոհ դարձած բոլոր ազգային փոքրամասնութիւններին, յատկապէս ընդգծելով իր մտահոգութիւնը դեռեւս անպատիժ մնացած ոճիրների վերաբերեալ:

10. Իտալիայի 35 քաղաքներ, նահանգներ, շրջաններ արդէն պաշտօնապէս ընդունել են Հայոց ցեղասպանութիւնը: Նախատեսւում է, որ Հռոմի նահանգային խորհուրդը նոյնպէս առաջիկայում կընդունի համապատասխան օրէնք:

11. Քրդական վտարանդի պառլամենտը, որը գտնւում է Բրիւսելում, հռչակագիր է ընդունել հայկական ցեղասպանութիւնը պաշտօնապէս ճանաչելու մասին:

12. 2000 թ. մարտի 29-ին Շւեդիայի խորհրդարանի արտաքին յարաբերութիւնների հարցերով մշտական յանձնաժողովը բանաձեւում կարծիք է յայտնել, թէ անհրաժեշտ եւ կարելոր է անցկացնել

անկանխակալ եւ անկախ միջազգային ուսումնասիրութիւն հայ ժողովրդի դէմ իրականացած ցեղասպանութեան առընչութեամբ:

13. 2000թ. նոյեմբերի 8-ին Ֆրանսիայի սենատը 164 կողմ, 40 դէմ, և 4 ձեռնպահ քվէներով ճանաչեց Հայոց ցեղասպանութիւնը:

14. 2000թ. նոյեմբերի 17-ին Իտալիայի խորհրդարանը գերակշիռ մեծամասնութեամբ ճանաչեց Հայոց ցեղասպանութիւնը:

15. 2004 թ. Ապրիլի 21-ին Կանադայի խորհրդարանի Համայնքների պալատը 153 թեր, 68 դէմ եւ 8 ձեռնպահ քվէներով պաշտօնապէս ճանաչեց Հայոց ցեղասպանութիւնը: Կանադայի խորհրդարանի համայնքների պալատը 1996 թ. բանաձեւ է ընդունել, որում արձանագրում է 1915 թ. ապրիլի 24 տեղ գտած մէկուկէս միլիոն մարդկանց սպանութիւնը: Սրան նախորդել էր Կանադայի Օնտարիօ եւ Քեբեկ նահանգների կողմից Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը, իսկ Կանադայի խորհրդարանի վերին պալատը՝ սենատը, Հայոց Ցեղասպանութիւնը դատապարտող բանաձեւ էր ընդունել դեռեւս 2002 թ. յունիսի 13-ին:

16. 2004 թ. Մայիսի 31-ին, ԱՄՆ-ի Վերմոնտի նահանգի նահանգապետ Ջեյմս Դուզլասը հրապարակել է հռչակագիր, որում նշված է Թուրքիայում հայերի ցեղասպանության 89-րդ տարեդարձը: Վերմոնտը դարձել է 37-րդ նահանգը, որը ճանաչել է հայերի ցեղասպանությունը: Ցայսօր Ցեղասպանութիւնը նահանգապետերի յայտարարութիւնների կամ խորհրդարանական բանաձեւերի ընդունման միջոցով ճանաչել են ԱՄՆ-ի 50 նահանգներից հետեւեալները. Ալասկա, Այդահօ, Արիզոնա, Արկանզաս, Դելաւար, Կալիֆօռնիա, Կոլորադօ, Կոնեկտիկուտ, Իտա, Իլինոյզ, Հարաւային Կարոլինա, Հիւսիսային Կարոլինա, Մէյն, Մերիլանդ, Մասաչուսետս, Միչիգան, Մինեսոտա, Միսսուրի, Մոնտանա, Նեւադա, Նիւ Համփշայր, Նիւ Ջերսի, Նիւ Մեքսիկօ, Նիւ Եօրք, Պենսիլւանիա, Ջորջիա, Ռոդ Այլանդ, Վիրջինիա, Վաշինգտոն, Վիսկոնսին, Օկլահոմա, Օրեգոն, Ֆլորիդա :

17. Վերջին ճանաչումների մէջ իր նշանակութեամբ կարեւորում է նաեւ 2003թ. Դեկտեմբերի 16-ին Շւէյցարիայի խորհրդարանի ընդունած որոշումը՝ Հայոց Ցեղասպանութիւնը ճանաչելու մասին, ինչպէս նաեւ օրերս Ուրուգւայի Արեւելեան Հանրապետութեան նախագահ Խորխէ Բաժէի կողմից վաւերացած երկրի խորհրդարանի ընդունած բանաձեւը, որով ապրիլի 24-ը պաշտօնապէս հռչակում է Հայ նահատակների ոգեկոչման օր: Օրէնքի ոյժ ստացած բանաձեւը պետական լրատւամիջոցներին պարտաւորեցնում է ամէն տարւայ Ապրիլի 24-ին լուսաբանել 1915-ի դէպքերը: Նաեւ Վատիկանը եւ Վենեզուելան:

18. Սլովակիա, 2004թ. նոյեմբերի 30:

19. Լեհաստան, 2005թ. ապրիլի 19-ին:

20. Լիտւանիայի խորհրդարանը՝ 2005 թ. դեկտեմբերի 16-ին:

9 - Վերջաբան

Այսպիսով արևմտահայ ժողովուրդը կորցրեց իր Ֆիզիկական գոյութիւնը, իր գոյքն ու ունեցւածքը, իր ազգային արժանիքները, իր հայրենիքը, ոչնչացման ենթարկւեցին 66 քաղաքների ու 2500 գիւղերի հայ ազգաբնակչութիւնը, կողոպտւեցին ու քանդւեցին ավելի քան 2000 եկեղեցիներ ու վանքեր, 1500 դպրոցներ ու վարժարաններ: Օսմանյան Կայսրութիւնում միայն հայ ժողովրդին հասցւած նիւթական վնասը 1919թ. կուրսով կազմել է մօտ 15 միլիարդ Ֆրանկ:

Առաջին նամաշխարհային պատերազմի ավարտից հետո համաշխարհային հասարակութեան կողմից բողոքներ տեղի ունեցան, նրանց թվում էին՝ Ֆրանսիացի հնագետ-պատմաբան Ժակ դը Մորգանը, Գերմանացի հայագետ Յոզեֆ Մարկլարտը, Եոհան Լեփսիուսը, Արմին Վեգները, Անտուան Մեյեն, Ֆրեդր. Սակլերը, Արնոլդ Թոյնբին, Վալերի Բրիւսովը, Յենրի Մորգնտաուն և շատ ուրիշներ:

Օգտագործւած աղբիւրներ

- 1- Հայ ժողովրդի պատմութիւն, 8-ատորեակ, հատոր 1- 8, ՀԳԱ հրատ., Երեւան 1967-1984:
- 2- Հայ այ ժողովրդի պատմութիւն, Երեւանի Պետ. համալսարան, Երեւան 1985.
- 3- Վ. Բաբուրդեան, Թուրք-իրանական յարաբերութիւններ, 1900-1914, Երեւան, 1974:
- 4- Հ. Մելիքսեօբեան, Արեւմտահայերի բռնագաղթը, Երեւան, 1975:
- 5- Ա.Գ.Արաքանեան, Համառօտ ուրւագիծ հայ գաղթավայրերի պատմութեան, հ. 1 եւ 2 Երեւան 1964 եւ 1967:
- 6- Ա. Գասպարեան, Սփիւռքահայ գաղթօջախներն այսօր, Երեւան 1962:
- 7- Մ. Վարանդեան, Հ.Յ.Դ. պատմութիւն, հ 1,2 Թեհրան, 1981:
- 8- Ա. Բախչիւնեան, ծագումով հայերն, Երեւան 1993:
- 9- Ա. Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982:
- 10- Հայկական Սովետական Հանրագիտարան հ. 1-13, Երեւան:
- 11- Նաիմ-Բեյի Յուշերը, Արամ Անտոնեան, Բեյրութ, 1974:
- 12- Հայոց գողգոթան:
- 13- Եսմաիլ Բահն, Հայերի ցեղասպանութիւնը (պարսկ.), Թեհրան 1978:
- 14- Թուրքերի ծագումը, Երեւան:
- 15- Ար. Օհանջանեան, Անժխտելի փաստաթղթեր Հայ Եղեռնի մասին, թարգմ. եղ. Գերմանիկ, Թեհրան 1999:
- 16- Է. Բանս, Թուրքիա, Բերլին 1919:
- 17- Հայկական Հարց հանրագիտարան, Երեւան:
- 18- Ամերիկական մամուլի անդրադարձը հայոց ցեղասպանութեան մասին, յօդւածների եւ լուրերի ժողովածու-1913-1990:
- 19- Մ.Գ. Ներսիսեան, Հայոց Եղեռն, Երեւան:
- 20- Ա. Փափագեան, Երիտթուրքերի դատավարութիւնը, Երեւան:
- 21- Մամուլ. Ալիք, Արաքս, Ապագայ, Լոյս, Պահակ, Փիւնիկ, Օիածան, Ջարթօնք, Ազդակ, Պատմաբանասիրական հանդէս, Լրաբեր, Հոլո:
- 22- Օրացոյցներ. Բաֆֆի, Նայիրի, Աբովեան, Գարուն, Չարենց, Կանթեղ, Բաֆի տարեգիրք: